ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-19/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի գնահատման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 11.04.2019 ժամը 12.00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ/ Հ. Սարոյանը

Անդամներ՝

Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ/ Վ. Ավետիսյանը

Լ. Կարասակալյանը

Գնման Պատասխանատու /Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ/՝ Կ. Եսայանը

Ա. Համբարձումյանը

Հանձնաժողովի քարտուղար՝

Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող՝ ԳՊ/ՄՀմ/ Մ. Նիկոլյանը

1. <u>Ընդունել ի գիտություն.</u>

1.1 ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե /Կոմիտե/ 05.04.2019 հարցում է ուղարկվել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներ՝ Սմարթլայն, Ինֆինիտի Գրուպ, ԱՌԷԱ Պապիրուս ՍՊ ընկերությունների հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

1.2 Գնահատող հանձնաժողովի բացման նիստի 29.03.2019-05.03.2019 թիվ 2 որոշմամբ, ղեկավարվելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով առաջին տեղը զբաղեցրած Սմարթլայն, Ինֆինիտի Գրուպ, ԱՌԷԱ Պապիրուս ՍՊ ընկերություններից էլեկտրոնային փոստի միջոցով պահանջվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 10.04.2019 ներկայացնել Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ սահմանված՝ առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագիրը /ամբողջական նկարագիր/:

2. <u>Հանձնաժողովն արձանագրեց.</u>

2.1 Կարգով սահմանված ժամկետում Կոմիտեից 11.04.2019 առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներից հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ ստացվել է դրական եզրակացություն /կցվում է/:

2.2 Սույն արձանագրության 1.2 կետով նշված Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ պահանջվող փաստաթղթերը սահմանված ժամկետում ներկայացվել են Սմարթլայն, Ինֆինիտի Գրուպ, ԱՌԷԱ Պապիրուս ՍՊ ընկերությունների կողմից և գնահատվել բավարար /կցվում են/:

3. <u>Հանձնաժողովը որոշեց.</u>

3.1 Հիմք ընդունելով վերոգրյալը ընտրված մասնակից ճանաչել՝

Սմարթլայն ՍՊԸ 1,3,4,5,6,11,12,13,14,17,19,20,21,30,31 չափաբաժիններով

Ինֆինիտի Գրուպ ՍՊԸ՝ 2,8,10,16,22,23,24,25,28 չափաբաժիններով

ԱՌԷԱ Պապիրուս ՍՊԸ՝ 7,9,18,26,27 չափաբաժիններով

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0

3.2. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը /կցվում է/:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Հ. Սարոյան

անդամներ՝ _____ Վ. Ավետիսյան

_____ Ն. Կաբասակալյան

_____ Կ. Եսայան

_____ Ա. Համբարձումյան

քարտուղար՝ _____ Մ. Նիկոլյան